XIX Դ. ՎԵՐՋԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Ե. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայ հասարակական-քաղաքական միտքը և մասնավորապես մամուլը XIX դ. վերջին հետևում էին ոչ միայն եվրոպական, այլև ռուսաստանյան առաջավոր գաղափարներին ու ավանդույթներին։ Ռուս հեղափոխական և լիբերալ նարոդնիկության ազդեցությամբ 1880-ական թվականներին Մոսկվայում և կայսրության այլ քաղաքներում ձևավորվում ու գործում են հայ ուսանող երիտասարդության ընդհատակյա խմբակներ ու միություններ։ Հայտնի են նաև ռուս նարոդնիկական խմբակների ակտիվ մասնակիցներ Եկատերինա Թումանովան, նրա քույրը՝ Հռիփսիմե Թումանովան, Ստեփան Ղուրդաշյանը, Դավիթ Այվազյանը, Օլգա Սաֆարյանը, Կոնստանդին Մամիկոնյանը, Մելքոն Մուրադյանը, Ալեքսանդր Փիրումյանը, Արշակ Սաֆարյանը, Գրիգոր Արազյանը, Հովհաննես Մանուչարյանը և ուրիշներ։ 1881 թ. Մոսկվայում ձևավորվել և գործում էր հայ ուսանողների ընդհատակյա մի խմբակ՝ «Հայրենասերների միությունը»։ Նարոդնիկական գաղափարների խոր ազդեցությունը կրող հիշյալ խմբակի մեջ էին Ներսես Աբելյանը, Թամարա Ադամյանը, Դավիթ Ներսիսյանը, Միքայել Ջալյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները և ուրիշներ։ Միությունը ստեղծեց ընդհատակյա փոքրիկ տպարան և 1884 թ. սկսեց հրատարակել «Ազատության ավետաբեր» թերթը։ Խմբագրական կազմում էին Ներսես Աբելյանը, Աբրահամ Դաստակյանը և Դավիթ Ներսիսյանը։ Հրատարակվել է մի քանի համար, յուրաքանչյուրը՝ ութ էջ ծավալով։ Դադարել է կառավարության հետապնդումների պատճառով։ «Հայրենասերների միությունը», «Ազատության ավետաբերը» և թերթի հրատարակած կոչերն ու թռուցիկները իրենց գլխավոր խնդիրն էին համարում հեղափոխական պայքարի միջոցով Հայաստանի ազատության և անկախության նվաճումը։ «Հայրենասերների միության» պատգամներից մեկն էլ ազգերի համերաշխությունն է,—ասված է «Ազատության ավետաբերում»,—ուստի մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազգերի մեջ... Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, եթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դառնում ուրիշների կանոնավոր զարգացման... ուստի «Հ. Մ.»-ն աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստություններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականությունը։ Եթե Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը՝ երկրագործը, արհեստավորը, մշակը տնտեսապես հարստահարվելու են, «Հ.Մ.»-ի աչքում ոչ մի քաղաքական ազատություն, միտք նշանակություն չունի։ «Հ.Մ.»-նը ատելի են թե՛ քուրդ ասպատակող շեյխը, թե՛ թուրք ճնշող պաշտոնյան, և թե՛ հայ հարստահարողները։ Մենք թշնամի ենք ներկա անձնական բաժան-բաժան կազմակերպության, որտեղ տկարն անօգնական է, իսկ ուժեղը՝ հարստահարող ու անգութ։ Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, որտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը՝ ընդհանուրի համար։ Ահա թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության ձեռքի հողերը պետք է անցնեն համայնքների ձեռքը, համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող արդյունաբերողն է։ Միևնույն ժամանակ համայնքները ներկայացնում են այն

սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցությունը, ֆեդերացիան»[1]։

Գյուղական համայնքի վերաբերյալ ռուս նարոդնիկների ծրագրերից ընդօրինակած այս և այլ գաղափարները հայ իրականության մեջ նոր, ազատաբաղձ ղողանջներ էին։ «Ազատության ավետաբերին» մտահոգում էր և ազգային հարցը՝ Հայկական խնդրի լուծումը։ 1883-ին հրատարակած իր կոչերից մեկում, որը սկսվում էր «Պիտի գոռամ, պիտի կրկնեմ՝ անդադար ազատություն» հայտնի բնաբանով և տարածվել է Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Արցախում և այլուր, այդ միտքը ավելի ցայտուն է արտահայտված։

«Ազատության ավետաբերի» էջերում մերկացվում էր թուրքական կառավարող շրջանների հայահալած քաղաքականությունը, հայ ժողովրդին կոչ էր արվում տապալել սուլթանական դաժան տիրապետությունը, «ապրել ազատասեր ժողովրդին վայել ինքնուրույն կյանքով»[2]։ «Մենք ցանկանում ենք Հայաստանի ժողովրդին ազատված տեսնել բարբարոսների լծից,—ասված է «Հայե՞ր» վերտառությամբ թռուցիկում,—...Հայաստանի ժողովուրդը իրավունքներ ձեռք բերելու և բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց, այն է՝ արյունով գնել ազատությունը և ցույց տալ քաղաքակրթված աշխարհին, որ հայաստանցին ըմբռնել է ազատության գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին զոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենաազնիվը, իր սիրելի որդիների կյանքը»[3]։ Այսօր՝ ավելի քան հարյուր տասը տարի անց, այդ կարգախոսը տակավին չի կորցրել իր նշանակությունը և հնչեղությունը։

«Ազատության ավետաբերը» հայ ժողովրդին, առաջին հերթին երիտասարդությանը, մղում էր դեպի գլխավոր նպատակը՝ ազգային ու սոցիալական ազատության նվաճում։ Նա երիտասարդությունից պահանջում էր՝ «մրտնել ժողովրդի մեջ, հայաստանցուն հասկացնել նրա իրավունքները, այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակը, օգնել նրան ամենայն կերպով և անձնվիրաբար»[4]։

«Ազատության ավետաբերի» չորրորդ համարում հրապարակված հոդվածներում «Մի բացատրություն», «Սարսափահար միջոցների դերը մեր հեղափոխական գործունեության մեջ Տաճկահայաստանում» և այլն, պարզաբանված են հայ ազգային-ազատագրական շարժմանն առնչվող խնդիրները։ Ուշադրության արժանի է թերթի հետևյալ բանաձևը՝ հայ իրականության մեջ վերջացավ ինքնաճանաչման շրջանը, սկսվել է իրական, գործնական հարցերի լուծման, թուրքական լծից ազատագրման համար մղվող պայքարի փուլը։ Թերթը ճիշտ կերպով նկատել է, որ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները խոր կնիք են դնում հայ հասարակական-քաղաքական մտքի վրա, աշխատավոր զանգվածներին արթնացնում, նրանց մեջ բորբոքում հայրենասիրական տրամադրություններ։

Հիրաշի հայ ժողովրդի կյանքում առաջացած նոր իրադրությունների ծնունդն էր «Հայրենասերների միությունը», որի թելերը ձգվում-հասնում էին Արևմտյան Հայաստան, Վան և այլ վայրեր։ «Ազատության ավետաբերը» հայ ժողովրդին հորդորում էր դասեր քաղել առաջավոր ազգերի փորձից, ազնվաբար ծառայել ազատության վսեմ գործին, քանզի «Հայաստանը կանգ-

---

1 Տե՛ս ՀՀՊՊԿԱ, ֆ. 49/113 գ, գ. 552 (ընդգծումը մերն է—Խ. Բ.)։ Քանի որ «Ազատության ավետաբերի» սակավաթիվ համարներ են պահպանվել, մենք ծավալուն քաղվածքներ ենք բերում «Դատական արխիվային գործից»։

2 Կոչի օրինակներից մեկը պահպանվում է Ռուսաստանի դաշնության կենտրոնական պետական պատմական արխիվի ոստիկանության դեպարտամենտի գործերում (տե՛ս ЦГИА РС, ДП 1883, д. 1721, № 114)։

3 Տե՛ս Ազատության ավետարեր, 1884, № 4։

4 Տե՛ս ЦГИА РС, ДП 1883, д. 1721, № 1—4։

նած է հեղափոխության շեմին, այդ հեղափոխությունից հեռու մնալ մենք չենք կարող, որովհետև իրերի դրությունը նրան պատմական պահանջ է դարձրել։ Մեզ մնում է միայն կազմակերպել նրան և տալ նպատակահարմար ուղղություն։ Հարկավոր է հայ ժողովրդին արթնացնել դարավոր թմրությունից։ Դա միայն լուսավորության միջոցով չէ, որ պետք է կատարվեր, այլ ազատագրական պայքարի պրոպագանդի, ժողովրդի միասնության»[5]։

«Ազատության ավետաբերի» չորրորդ համարում տպագրվել են Ռափայել Պատկանյանի «Ազգային երգում» և «Օրհաս» բանաստեղծությունները, որոնք Հայաստանի ազատագրության մարտակոչեր էին[6]։

«Ազատության ավետաբերը» թեև շուտ փակվեց, բայց բարի հետք թողեց հայ պարբերական մամուլի հարուստ պատմության տարեգրության մեջ։

«Ազատության ավետաբերի» հրատարակությունը դադարելուց որոշ ժամանակ անց Եվրոպայում սովորող մի խումբ հայ ուսանողներ հիմնադրեցին մի նոր կազմակերպություն, որը հետամտում էր Հայաստանում ապստամբական տրամադրությունների տարածմանը։ Կազմակերպության ղեկավարը Այցարի աշխարհում հայտնի բարեհամբավ Աթաբեկյան տոհմից էր, Հովսեփ Աթաբեկյանցի հորեղբոր որդի Ալեքսանդր Աթաբեկյանը։ Նա 1890-ական թվականներին, ուսումնառության ժամանակ, Գաբրիել Բահաթրյանի հետ ձեռք է բերում հայերեն տառեր և ստեղծում մի փոքրիկ տպարան։ Գաղտնապահության նկատառումներով տպարանի հրատարակությունների վրա նշվում էր «Փարիզ։ Միջազգային տպարան»։ Իրականում դրանք լույս էին տեսնում Ժնևում և առաքվում Հայաստան։ 1892-ին տետրակների ձևով հրատարակվեցին Սոֆիա Բարդինայի «Դատական ճառը», Պ. Կրոպոտկինի «Քաղաքական իրավունքները», «Պետությունների քայքայումը» և այլ գործեր։ 1893-ին երևաց «Անիշխանական հրատարակություններ» մատենաշարի առաջին գրքույկը՝ «Գյուղացիների մեջ» խորագրով, որտեղ հարց ու պատասխանի ձևով պարզաբանություններ էին տրվում գյուղացիության դերի մասին։ 1894-ի հունվարին լույս է տեսնում «Համայնք» թերթի առաջին համարը (Փարիզ)։ Նրա հավատո հանգանակը քաղաքական բացարձակ ինքնավարության, տնտեսական հավասարության և միջազգային համերաշխության հաստատումն էր։ «Համայնքը» կազմված էր ութ փոքրադիր էջերից։ Անորանիկ համարը բացվում էր «Հեղափոխական պրոպագանդը և հեղափոխությունը» առաջնորդող հոդվածով։ Նրանում միջազգային անարխիստական գաղափարախոսության հանրահայտ դրույթների ոգով քարոզում էին ժողովրդական ապըստամբություններ։ Իսկ դրանց հաջողությունների երաշխիքը համարվում էր մարդկանց կազմակերպվածությունը, գիտակցության ու աշխարհայացքի ընդլայնումը, հայրենասիրության ու խիզախության դաստիարակությունը։ «Համայնքի» «միակ նպատակը հեղափոխական պրոպագանդային ծառայելն է»։

«Համայնքը» խորագրով խմբագրականում, թերթը հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի ու արևմտահայերի ազատագրությունը տեսնում էր զինված ապստամբական շարժումների մեջ։ «Կառավարության կոչումը», «Հայկական խնդիրը» (1894, № 2), «Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է», «Հեղափոխական կազմակերպություն», «Ինչ է ազատությունը» (1894, № 3), «Անիշխանական գաղափարը և նրա զարգացումը» (1894, № 4), «Հայ ժողովրդի համայնական հակումները» (1894, № 5) և այլ հոդվածներում լուսաբանություն են ստացել հայկական ազատագրական շարժումների գաղափարախոսության հարցերը։ «Բավական չէ միայն ցանել դաղափարական սերմեր,—գրում էր թերթը № 5-ում,—ինչքան էլ այդ սերմերը լավ լինեն, աճելու և պտղավորելու համար

5 Ազատության ավետարեր, 1884, № 4։

6 Բանաստեղծությունները անստորագիր են (տե՛ս Ռ. Պատկանյան, երկեր, հ. 1, Երևան, 1963, էջ 176—179, 309, տե՛ս նաև Արմենիա, 1888, № 22)։

հարկավոր է, որ նրանք նպաստավոր հող գտնեն։ Իսկ այդ հողը հայ ժողովրդի հեղափոխական հակումներն են... Հողի համայնականացնելը միայն կարող է բավականություն տալ և ապահովեցնել հեղափոխական կրակի մեջ ընկած թշվառ հայ գյուղացուն։ Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է»։

Ագրարային հարցը «Համայնքի» առաջադիր ծրագրային նյութերից էր։ «Բանվոր՝ վերցրու գործարանը, գյուղացի՝ տիրիր հողին»—այս էր թերթի նշանաբանը։

«Համայնքի» էջերում հոդվածներ են տպագրվել 1848 թ. ֆրանսիական հեղափոխության, Իտալիայի ու այլ երկրների քաղաքական ընդվզումների, Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումների և այլ իրադարձությունների մասին։

«Համայնքը» և նրա խմբագիր Ա. Աթաբեկյանը սերտ կապեր ունեին «Մոսկվայի հայ ուսանողական ժողովի», ինչպես և Հայաստանի հեղափոխական կազմակերպությունների հետ։

1895-ին «Համայնք» թերթը դադարեց լույս տեսնելուց։

Ուշագրավ է «Աշխատանք» քաղաքական գրական երկլեզու շաբաթաթերթը, որի առաջին համարը հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է տեսել 1879 թ. դեկտեմբերի 15-ին, Թիֆլիսում, Գրիգոր Տեր-Մելիքսեթեկյանի (Մելիքսեթյան) խմբագրությամբ։ «Աշխատանքը» շարունակում և խորացնում է արևելահայ դեմոկրատական մամուլի ավանդույթները։ Նրա առաջին համարը բացվում էր «Լո՜ւյս, լո՜ւյս... թող շատ լինի լո՜ւյսը» առաջնորդող հոդվածով։ Աստվածաշնչյան «Եղիցի լույս» և ապա Գյոթեի՝ մահից առաջ արտասանած «Լո՜ւյս, լո՜ւյս... թող շատ լինի լո՜ւյսը» խոսքերը ծրագրային նշանակություն ունեցան թերթի համար։ Խմբագիր-հրատարակիչը՝ Գ. Տեր-Մելիքսեթեկյանը ժամանակի առաջավոր մտավորականներից էր, գյուղացիական գաղափարախոս, նարոդնիկական հովերով տարված դեմոկրատական աշխարհայացքի տեր գործիչ։ Նա, ըստ էության, հայ դեմոկրատական հոսանքի առաջին ներկայացուցիչներից էր, նալբանդյանական ուղեգծի հետևորդ։ Աշխատավորների իրավունքների պաշտպանությունը XIX դ. 80-ական թվականներին Գ. Տեր-Մելիքսեթեկյանի դեմոկրատական հայացքների դրսևորումներից էր[7]։ «Աշխատանքը» իր ծրագրային հոդվածներում գրել է, որ «պաշտպանելու է աշխատավոր մարդու շահերը»։ Իրականում այդպես էլ վարվում էր։ «Մտնելով հասարակաց ասպարեզ,—գրում էր թերթը,—«Աշխատանքը» հայտնում է իրեն բարեկամ բոլոր մարդկության և այրված սրտով փափագում է կյանքի մեջ մի օր ավելի շուտ տեսնել մարմնացած արդար աշխատանքի սկզբունքը»[8]։

Թերթի առաջին համարում լույս են տեսել «Աշխատանք» լրագրի խմբագրության կողմից», «Դարձ դեպի Նազարյանի հիշատակը» և այլ նյութեր։ Խմբագրությունը ջերմորեն է արտահայտվել «Հյուսիսափայլի», Ստեփանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի գործունեության մասին։

«Աշխատանքի» շատ հոդվածներ նվիրված են Հայկական հարցին, Սան-Ստեֆանոյի դաշնագրին և այլ խնդիրների։ Քննադատված են արևմտյան դիվանագիտության խաղերն ու սուլթանական Թուրքիայի քաղաքականությունը։ «Տասնիններորդ դարում ազգային հարաբերություններում հարկավոր է լինել անկիրք,—գրում էր թերթը,—դեն ձգել հիմար դիմակները, հեռանալ անհիմն

---

7 Պատմագիտության մեջ ժամանակին բանավեճ է մղվել Գ. Տեր-Մելիքսեթեկյանի և նրա խմբագրած «Աշխատանք» թերթի դեմոկրատական ուղղության շուրջ [տե՛ս Կ. Դանիելյան, Գրիգոր Տեր-Մելիքսեթեկյանի հրապարակախոսական ժառանգության շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1980, № 3), Վարդան Ավետիսյան, Փաստերը հերքում են (Լենինյան ուղիով, 1974, № 9), Հրայր Թամրազյան, Գրիգոր Տեր-Մելիքսեթեկյանի տնտեսագիտական հայացքների հարցի շուրջը (Երևանի հասարակական գիտությունների, 1981, № 8)]։

8 Աշխատանք, 15. XII. 1879։

մարգարեություններից, և դրա փոխարեն աշխատել հիմնավոր կերպով կշռել ազգերի փաստերը և ուրիշ քաղաքագիտական լծորդությունները»[9]։

Ներկայացնելով Թուրքիայի կառավարող շրջանների՝ այլազգիների նկատմամբ վարած բռնության և հալածանքների բիրտ քաղաքականությունը, թերթը դրում էր. «Թուրքիան բոլորովին չհասկացավ պատմական փաստերի միտքը և ժամանակի ոգին։ Նա փոխանակ հպատակ ժողովրդի բնական հարգությունն ավելացնելու, ոկսեց խեղճ ժողովրդի էլած չէլածն էլ կողոպտել և թալանել»[10]։

Երկրամասի մշակութային կյանքը պատկերող նյութերում, թատերագիտական հոդվածներում և լրատվություններում «Աշխատանքը» շոշափել է թարգմանական և ինքնուրույն դրամատուրգիայի, թատրոնի խաղացանկի հարցերը, արժևքավորել տաղանդաշատ դերասաններ Ադամյանի, Զմշկյանի և այլոց դերակատարումներն ու արվեստը, առաջադրել ժողովրդին մատչելի, լուսավորող և արդիական խաղացանկերի պահանջը։

Գ. Տեր-Մելիքսեդեկյանը, ծնված լինելով Շուլավերում, լավ գիտեր էր ծննդավայրի և առհասարակ Բորչալուի գավառի գյուղացիության սոցիալ-տնտեսական ու կրթական կյանքը։ Նա ընդհարվել էր գյուղական մեծահարուստների և հետադեմ մտավորականության հետ։ Ժողովրդական ուսուցչի նրա համբավը տարածվել էր ոչ միայն Ելիզավետպոլի նահանգում, որտեղ նա աշխատել էր 1870—1876 թթ., այնուհետև՝ հայրենի գյուղում, որտեղ իր դպրոցն էր բացել և աղքատների երեխաներին կրթել, այլև Լոռվա խուլ ու խավար անկյուններում։ Վաստակաշի մեծ մասը նա բաժանում էր գյուղացիներին, ընչին միջոցներով թերթ հրատարակում, լուսավորություն տարածում «խավարի թագավորությունում»։ Նա քննադատում էր դպրոցական տեր-թոդիկյան բարքերը, տիրացուականությունը և ասիական խավարամտությունը։ «Աշխատանքի» 1880 թ. հունվարյան համարում հրապարակված «Շուլավեր», «Ներքին լուրեր», «Նամակ Թիֆլիսից» և այլ թղթակցությունները խոսուն փաստեր են պարունակում այն ժամանակվա հայկական գավառական իրականության կրթական գործի, գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության մասին։ Գ. Տեր-Մելիքսեդեկյանն իր ատենախոսություններում, գրքույկներում, գյուղական կյանքն արտացոլող պատումներում և հատկապես «Աշխատանքում» հրատարակած հոդվածներում պարսավում էր դպրոցներում արմատավորված հակամանկավարժական արատավոր մեթոդները, ձաղկում հոգևորականության տգետ և եսամոլ ներկայացուցիչներին։

«Աշխատանքի» հրատարակությունը զուգադիպեց երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Գյուղում սկսվել էր դասակարգային շերտավորման գործընթացը, մուտք էր գործում վարձու աշխատանքը։ Գյուղը քայքայվում էր, հողազուրկ գյուղացիությունը թողնում էր հայրենի գյուղը և բռնում քաղաքի ճանապարհը։ Արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման սոցիալական գլխավոր աղբյուրը գյուղացիական հողազուրկ զանգվածն էր, որը աշխատանք էր որոնում արդյունաբերական կենտրոններում։

«Աշխատանքը» ագրարային հարցում աղերսներ ուներ Միքայել Նալբանդյանի գյուղացիական սոցիալիզմի գաղափարների հետ։ Ոչ.ոչ հոդվածներում կան ձևակերպումներ, որոնք հիշեցնում են Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհի» և «Երկու տողի» տեսակետները ու ոճը։ Կարելի է ցույց տալ նույնիսկ բառացի համանմանություններ։ Դա արտահայտություն է գտել «Աշխատանքի» խմբագրի նաև այլ գործերում, որը և հիմք է տալիս եզրակացնելու, որ նա արևելահայ ազգային դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ է, չքավոր գյուղացիության գաղափարախոս։ «Նվեր քյասիբ գյուղացիներին» աշխատությունում և այլ գործերում Գ. Տեր-

---

9 Նույն տեղում, 8. I. 1880։

10 Նույն տեղում։

Մելիքսեդեկյանը, ընդօրինակելով Մ. Նալբանդյանին, գրել է. «Մենք քարոզեցինք, որ քյասիբ գեղացին մեղք է. պետք է ցավենք նրա վրա ու չպետք է ծծենք սրա արյունը, ամա պետք է մեր կարողության չափ օգնենք նրան, դարման լինենք նրա ցավերին։ Ու էդ ոչ թե մենակ խոսքով ասացինք. ամա աշխատեցինք, ինչքան կարելի էր գործով էլ նշանց տալ»[11]։ Ակնհայտ է այս հատվածի նմանությունը «Երկու տողի» համապատասխան ձևակերպմանը։

«Աշխատանքը», թեև ոչ հետևողականորեն, այսուհանդերձ, անդրադարձել է նաև բանվորական հարցին։ Թերթի 1880 թ. փետրվարի 25-ի համարում տպագրված «Մշակների հարցի առիթով» հոդվածում ցույց են տրված երկու ձևավորված դասակարգերի՝ կապիտալիստների և բանվորների փոխհարաբերությունները, բանվորական միությունների ստեղծման անհրաժեշտությունը։ Մի այլ հոդվածում թերթը նշել է. «Մշակների հարցը զարթնեցնելիս «Աշխատանքը» զգուշացրել է, որ նրանց թուլությունը ցրվածության մեջ է, հարկավոր է համախմբվել, միավորվել և միասնական ուժ դառնալ»[12]։

Գ. Տեր-Մելիքսեդեկյանը ջանում էր մամուլը «ժողովրդական կարիքներին ու պահանջմունքներին ծառայեցնել»՝ իրականացնելով իր իսկ ընտրած ծրագիրը։ Թերթը դժգոհ էր Ս. Գուլամիրյանի, ինչպես և Ս. Էնֆիաճյանցի՝ 1880 թ. հրատարակած օրացույցների բովանդակությունից. «Մի ազգի օրացույցը, ինչպես առօրյա հասարակաց գործածական ձեռնարկ, հարկավոր է, որ դյուրին ու հեշտամարս լեզվով ըմբռնի այդ ազգի ներկա կյանքի բոլոր գլխավոր երևույթները կրքոտ կերպով։ Այսպես, ուրեմն, հայ օրացույցը, ուրիշ բաների թվում, մեզ պիտի տա բավականացուցիչ տեղեկություններ...»[13]։

Լրագրի դերին և նշանակությանն է նվիրված «Աշխատանքի» 1880 թ. մարտի 10-ի «Մամուլի գործունյա անգործունեությունը» խորագրով առաջնորդող հոդվածը, որտեղ քննադատվում են լրագրական արատավոր բարքերը, անտարբերությունը ժողովրդի ցավերի նկատմամբ։ Հրապարակախոսական աշխույժ ոճով և կրքոտությամբ տոգորված հոդվածները հնչում են թարմությամբ։ Հաղթահարելով գրաքննության հարուցած դժվարությունները, «Աշխատանքը» ջանում էր բացել վարագույրը, աշխատավորությանը հասցնել ճշմարտությունը, Այս հարցերում նա բանավիճում էր «Մշակ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականների հետ։

«Աշխատանքի» 1882 թ. առաջին համարի՝ «Թիֆլիս, 6 մայիսի» վերտառությամբ առաջնորդող հոդվածում տրված է Կովկասի քաղաքական կյանքի համառոտ տեսությունը, խոսվում է Ա. Դոնդուկով-Կորսակովին Կովկասի գլխավոր կառավարչապետ նշանակելու, նրա վարելիք հնարավոր քաղաքականության և քաղաքական բնույթի այլևայլ հարցերի մասին։ Թերթը քննադատել է Կովկասի փոխարքա իշխան Վորոնցովին՝ հայերի նկատմամբ անբարեհաճ քաղաքականության համար։

Այսպիսին էր հայ դեմոկրատական «Աշխատանք» թերթը։

Դարավերջին հայ իրականության մեջ ուժեղանում են քաղաքական խմբումները, ծավալվում են ազգային-ազատագրական շարժումներ։ Ստեղծվում են քաղաքական տարբեր կազմակերպություններ, բանվորական, արհեստավորական և աշակերտական խմբակներ, կանանց միություններ, փոխօգնության գանձարկղներ։ 1891 թ. Թիֆլիսում գործող հայ աշակերտական խմբակներից մեկի շուրջը համախմբվում են առանձին բանվորներ, արհեստավորներ, մտավորականներ, որոնք մեկ տարի անց, 1892 թ. վերջերին հիմնում են «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» (ՀԲՀԱ), որը գործեց մինչև 1895 թ.։ Նորաստեղծ «Ասոցիացիայի» միության շարքերը

---

11 Գ. Տեր-Մելիքսեդեկյան, Նվեր քյասիբ գյուղացիներին, Թիֆլիս, 1879, էջ 17, հմմտ. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 30։

12 Աշխատանք, 1891, № 7։

13 Աշխատանք, 1880, № 4։

մտան Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Ա. Խաժակյանը, Պ. Մնացականյանը (Պիեր), Հ. Միրզոյանը, Հ. Մուրադյանը, Ս. Մարտիկյանը, Գ. Մագաթյանը, Տ. Պարոնիկյանը, Ա. Մեհրաբյանը, Հ. Ալվազյանը և ուրիշներ։ Ծանոթանալով Ռուսաստանի նարոդնիկական խմբակների, ինչպես և Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խմբակի հրատարակություններին ու սոցիալիստական բովանդակությամբ այլ գրքերի, նրանք հիմնադրեցին իրենց ընդհատակյա ապարանը և տպագիր թերթը։ Ընտրեցին նաև խմբագրական կոլեգիա. անդամներ՝ Աշոտ Խումարյան, Սարգիս Խանոյան, Սիսակ Տեր-Սիմոնյան, Արշալույս Խաժակյան, Պետրոս Մնացականյան։ Թերթը, որը սկզբում կոչվում էր «Ազատ Հայաստան», իսկ հետո վերանվանվեց «Կռիվ», հրատարակվել է Թիֆլիսում (տիտղոսաթերթին դրվել է Բրյուսել)։ «Ազատ Հայաստանի» առաջին համարը լույս տեսավ 1893 թ. հունիսի 23-ին։ Փակվել է 1894-ին։ «Ասոցիացիայի» անդամներից Սերգո Մարտիկյանը իր փոքրաթիվ համախոհների հետ որոշել էր պարբերականը հրատարակել «Ձայն» անունով, բայց հետո նրանք հետ կանգնեցին այդ մտքից և թերթը լույս տեսավ «Ազատ Հայաստան» վերտառությամբ[14]։ Ինչ խոսք, ամեն մի թերթի անվանակոչություն մեծ խորհուրդ ունի, քանզի այն ամենից առաջ արտահայտում է նրա հրատարակիչների և քաղաքական խմբավորման հավատամքը։ Արխիվային նյութերից, Աշոտ Խումարյանի ինքնակենսագրական թերթիկներից և «Ասոցիացիայի» գործով նրա անդամների հարցաքննությունների վավերագրերից երևում է, որ հրատարակվել է «Ազատ Հայաստանի» ինը և «Կռվի» երկու կամ երեք համար։ Թերթի «Ազատ Հայաստան» անվանումը պատահական չէր։ Նրանք քարոզչական գործունեություն էին ծավալել ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի պետականության վերականգնման ուղղությամբ։ «Ազատ Հայաստանը» որ հրատարակվում էր 200—300 օրինակով, իսկ առանձին համարներ մինչև 1000 օրինակ տպաքանակով, տարածվում էին Կովկասում, Պարսկաստանում, Արևմտյան Հայաստանում և սփյուռքի հայկական համայնքներում։ Ուշագրավ են Ա. Խաժակյանի «Հայաստանի ներկա դրությունը և հայ բանվորները» (1893, № 1), Ա. Խումարյանի և Ա. Խաժակյանի «Ի՞նչ բան է բանվորը» (№ 2), նույն հեղինակների «Աբդուլ Համիդ 2-րդ» (№ 3), «Նամակ Կովկասից» «Բանվորական մարշ», «Մեր համոզմունքը» (№ 5), «Մեր համոզմունքը և ծրագիրը» (№ 6—7), «Հեղափոխական պատվիրան» (№ 9) և այլ հոդվածները ու թղթակցությունները։ Թերթի գլխավոր ուղղվածությունը ոչ թե դասակարգային պայքարի պահանջն էր, այլ «հայկական հեղափոխության միջոցով Հայրենիքի (Հայաստանի) ազատագրման» ձգտումը։ Հիրավի, այդ նպատակին հասնելու քաղաքական և այլ միջոցների ընտրության գործում զգալվում է հայ ազգային կուսակցությունների, ամենից առաջ ս.-դ. հնչակյան կուսակցության, գաղափարախոսական ազդեցության դրոշմը։ Ինչպես «Ասոցիացիայի» ծրագրային վավերագրերում.. այնպես էլ թերթի հրապարակումներում, աներկբա նկատվում է «Նարոդնայա Վոլյա» կազմակերպության ծրագրի ազդեցությունը։ Ավելին, նույնիսկ առանձին հիմնադրույթներ գրեթե նույնությամբ թարգմանաբար քաղված են այդ ծրագրից՝ հարմարեցվելով տեղական պայմաններին և իրականությանը։ «Ասոցիացիայի» ծրագրի նախագծի առաջին՝ «Մեր պահանջները» բաժնում դրված է. «1. Բոլոր հասարակական գործերում համաժողովրդական քվեարկություն։ 2. Բոլոր գործարանները հանձնել բանվորներին։ 3. Հողը դարձնել հանրային սեփականություն։ 4. Որ չլինի օրենք ազգային խտրականության մասին։ 5. Խոսքի, մամուլի,

---

14 «Ասոցիացիայի», «Ազատ Հայաստանի» և «Կռվի» վերաբերյալ արխիվային նյութերը գտնվում են Մոսկվայի կենտրոնական կուսակցական արխիվում (ֆ. 64, ց. 1, պ. մ. 169, ֆ. 124, ց. 1, գ. 2041, 2056), Վրաստանի պետարխիվում (ֆ. 7, գ. 83, ֆ. 39, գ. 439)։ Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում (ֆ. 102, ց. 137. 1895 թ., գ. 245, մ. 1, թ. 182—290) և այլուր։

խղճի, ասոցիացիաների, ագիտացիայի և այլնի լիակատար ազատություն։ 6. Բոլոր միջոցներով ձեռք առնել ժողովրդի քաղաքակրթության համար և պարտադիր դարձնել բոլոր երեխաների տարրական կրթությունը։ 7. Մարզերի լայն անկախություն, որն ապահովվի ընդհանուր ձայնատվությամբ ընտրված կառավարությամբ և նրա դաշնակցային կապերով՝ ուրիշ մարզերի հետ։ 8. Ընդմիշտ ոչնչացնել պարտադիր զինվորական ծառայությունը, նրա փոխարեն ունենալ ազգային միլիցիա տվյալ վայրի պահանջներին համապատասխան»[15]։

Այնուհետև դրանց հաջորդում են ինքնուրույն, Հայաստանին նվիրված քաղաքական պահանջները, այն է՝ ապագա ազատ Հայաստանում ստեղծել ժողովրդավարական հանրապետություն, Օրենսդիր (Ազգային) ժողով, բոլոր գործարանները հանձնել բանվորներին, հողը դարձնել հանրային սեփականություն, հասնել քաղաքական ազատությունների ապահովման։ Ինչպես «ՀԲՀԱ»-ն, այնպես էլ նրա տպագիր թերթը, տոգորված էին ժողովրդավարական հասարակարգի կառուցման, ազգային ազատագրության և ազատ Հայաստանի ստեղծման հայկական գաղափարախոսությամբ։ Ի տարբերություն ս.-դ. հնչակյան կուսակցության, նրանց ծրագրում էլ «սոցիալիզմը մտնում էր ոնիս և վոնդվում պատուհանից»։ Տասնամյակների հեռավորությունից այժմ ավելի հեշտ է արժեքավորել «հայ ժողովրդի անագորույն կյանքը երջանիկ դարձնելու համար» մարտնչած հայ երիտասարդների ոգեշունչությունը, ավելի հստակ ատեղեռացնել «Ասոցիացիայի» քայլերդի «Կե՞ցցե Հայաստանը» առինքնող նոտի իմաստը։

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, «Ասոցիացիան» և «Ազատ Հայաստանը» իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում «ազատել հայ ժողովրդին ապստամբության միջոցով սուլթանական անարգ բռնակալ լծից, կատարել քաղաքական հեղափոխություն և անպայման իշխանությունը հանձնել ժողովրդին»[16]։ «Ասոցիացիայի» անդամները ոգեշնչված էին Արևմտյան Հայաստանում հայդուկային դարժման համար ձեռք բերած գործողություններով, հնչակյանների կազմակերպած Գումաբրուի ցույցով։ Ա. Խաժակյանը այդ ցույցը որակել է որպես «Հայկական ոսկե դարի սկիզբ»։

Տարաձայնությունները, ի վերջո, պառակտեցին միությունը։ «Ասոցիացիայի» անդամների մի մասը՝ Սիսակ Տեր-Սիմոնյանը, Սարգիս Խանդանը և այլք որոշում են ընդհատակյա տպարանը, «Ազատ Հայաստան» թերթը և հարում ՀՅ դաշնակցություն կուսակցությանը։ Իսկ մյուս մասը, որ կրում էր հնչակյանների ազդեցությունը, Աշոտ Խումարյանի ղեկավարությամբ շարունակում է ահաղանել «Ասոցիացիայի» բանվորական ուղղությունը՝ առգային գործունեությանը զուգահեռ։ Վերջիններս 1894 թ. դեկտեմբերի 1-ին հրատարակում են միության նոր թերթը՝ «Կռիվ» անունով, որը երկու համար լույս տեսնելուց հետո, փակվում է։ Երկրորդ համարը երկարատև ընդմիջումից հետո տպագրվեր 1895 թ. աշնանը։ «Կռվի» առաջին համարի նյութերը նվիրված են Սասունի 1894 թ. ապստամբությանը։ «Կռվի» անդրանիկ համարի բովանդակությունը՝ «Ազատության արշալույսին» հոդվածը ավարտվում է «Կեցցե՞ հայկական հեղափոխությունը... Կեցցե՞ Սասուն» մարտակոչերով։ «Կռվի» երկրորդ համարում լույս են տեսել «Կախաղանի տակ հեղափոխական պատգամ», «Կոչ՝ Պետրոպավլովյան բերդից» նյութերը։ Անկախ պառակտումից, «Ասոցիացիան» և նրա թերթերը գտնվում էին հայկական գաղափարախոսության, հայկական հեղափոխության հեռանկարի տիրական հմայքի տակ։ Իսկ դա չվերցից ցարական ինքնակալության և նրա տեղական

---

15 Ա. Խումարյանի վկայությամբ «Ասոցիացիայի» ծրագիրը հարազատ էր «Նարոդնայա վոլյայի» բանվորական խմբի ծրագրին» (տե՛ս Центральный партархив (М.), ф. 124, оп. 1, д. 2056. Մարտակոչ (Թիֆլիս), 1924, № 13.

16 Ազատ Հայաստան, 1894, № 6—7։

գործակալների՝ ոստիկանության տեսադաշտից։ Ուժեղացվում են հսկողությունն ու հարձակումները «Ասոցիացիայի» և թերթի նկատմամբ։

Ցարիզմը ջախջախեց «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան», փակեց նրա տպագիր օրգանը։ Սակայն «Ասոցիացիան» և նրա «Ազատ Հայաստան» ու «Կռիվ» թերթերը մի նոր ակոս բացեցին հայ պարբերական մամուլի անդաստանում՝ բարի հետք թողնելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ընդվզումների տարեգրության մեջ։

АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ПЕЧАТЬ КОНЦА XIX В.

Х. А. БАРСЕГЯН

Резюме

В конце XIX в. в России и за рубежом издавался ряд армянских газет, которые находились под влиянием идей русского революционного и либерального народничества. Такими изданиями были: «Азатутян аветабер» («Предвестник свободы», 1894, Москва), «Амайик» («Община», 1894, Париж), «Ашхатанк» («Труд», Тифлис, 1879).

Орган Ассоциации армянских рабочих—революционеров «Азат Айастан» («Свободная Армения», 1893—1894, Тифлис) наряду с социальными вопросами рассматривала вопросы освобождения западного армянства.

Указанные периодические издания представляют интерес в аспекте взаимосвязи передовых русских идей и армянского социального и освободительного движения.